

Ու պայթան՛ր, պայթան՛ր, պայթան՛ր երգեցի.
 - Ձեզի ընծան՛, հայ մարտիկներ -
 Գրիչս եղաւ անթոռոց սըրտերու հնոցի...
 - Ձեզի ընծան՛, քաջ մարտիկներ -
 Եղեգնեայ գըրչով վըրեժ երգեցի.
 Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՆԵՄԵՍԻՍ

Պաշտե՛ դահանակէ աչքերով աստուածուհին, ո՛վ ժողովուրդ,
 երբ բռնակալութիւնները կործանես, կործանե՛ այլեւս զինքն ալ,
 Եւ դո՛ւն բարձրացիր իր պատուանդանին վրայ՝ շուշան մը
 ձեռքիդ մէջ:

Քերթողն հըսկայ, մըրըրկավարս, հըրաչուհի,
 Նըւիրական արուեստանոցն իր մըտաւ,
 Եւ փակեց լայն պողպատ դըռներն հապըշտապ.
 Փակեց փեղկերն երկընքին դէմ, որոնց նեղ
 ճեղքերուն մէջ մընացին
 Արեգակին մազերն ոսկի, սանտըրուած:
 Լեռնակուտակ զանգուած մ՛ընտիր մարմարի
 Այդ շէնքին մէջ մըթընշաղ
 Կը սպասեր՝ ձեւն հազնելու հին դիւցազնի.
 Եւ կամ գուցէ կը յուսար
 Որ աստղերէն իջնելով՝
 Պիտի աստուած մը գայ իր մէջ բընակիլ:
 Չանգուածը այդ ապամաժ մ՛եր բարբարոս՝
 Որուն մէջ դեռ կը մընար
 Կիսաւեր բոյն մը արծուի.
 Եւ խորն իր մէկ խոռոչին